ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/67

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Մասնակցությամբ՝
«Դավիթ Պետրոսյան» Ա/Ձ-ի ներկայացուցիչ՝ Խ. Այվազյանի,

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 30.05.2019թ. թիվ 26/26-1/8960-2019 գրությամբ «Դավիթ Պետրոսյան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի 29.05.2019թ. թիվ Ե/ՎՈՒ/317-19 գրության հիման վրա, 30.05.2019թ. «Դավիթ Պետրոսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը 29.05.2019թ. թիվ Ե/ՎՈՒ/317-19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ և 47-րդ կետերի համաձայն ներկայացնում եմ Ա/Ձ Դավիթ Պետրոսյանի տվյալները (համապատասխան հիմքերով)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:»:

3. <u>«Դավիթ Պետրոսյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 31.05.2019թ.-ին գրությամբ դիմել է «Դավիթ Պետրոսյան» Ա/Ձ-ին ՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.05.2019թ.-ին թիվ 26/26-1/8960-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

Մասնակիցը 06.06.2019թ.-ին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Դավիթ Պետրոսյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/67 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

Գործի հակիրճ նկարագրությունը և փաստերը

- *2019թ. ապրիլի 04-ին Դավիթ Պետրոսյան Ա/Ձ-ն հայտ է ներկայացրել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ-ի կողմից հայտարարված «ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/8» ծածկագրով մրցույթին:*
- *Մրցույթի 1-ին չափաբաժնով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, և պահանջվել է ներկայացնել ապրանքի տեխնիկական բնութագիրը: Սահմանված*

ժամկետում ներկայացվել է ապրանքի տեխնիկական բնութագիրը, որը հանձնաժողովի կողմից գնահատվել է ոչ համարժեք, հրավերով պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրին և առաջարկվել է շտկել տեխնիկական բնութագիրը մեկ աշխատանքային օրա ընթացքում:

- *Սահմանված ժամկետում ներկայացվել է մեկ այլ բնութագրով համարժեք ապրանք, որը ևս գնահատվել է ոչ համարժեք և հայտը մերժվել է:*

Իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետը սահմանում է՝

… գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը սահամնում է՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական փվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությանն ենք հրավիրում հետևյալ հանգամանքի վրա.

«Դավիթ Պետրոսյան» ԱՁ-ի կողմից ներկայացվել է հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին համարժեք ապրանք, որը ունի նույն գործառույթները, ինչպիսին նախատեսված է հրավերով, և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Պատվիրատուի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը՝ գնման առարկայի հատկանիշները անուղակիորեն իրենց մեջ պարունակում են պահանջ կոնկրետ ապրանքի, որի մասին պատվիրատուի ներկայացուցիչը ծանուցել է «Դավիթ Պետրոսյան» ԱՁ-ին էլ. փոստի միջոցով:

Հետևաբար գտնում եմ, որ հանձնաժողովը գնահատել է ոչ օբյեկտիվ:»:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքներ քննող անձին խնդրել է հաշվի առնել ներկայացված փաստերը, փաստական հանգամանքները և «Դավիթ Պետրոսյան» Ա/Ձ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

4. <u>ՍՑ-LO-2019/67 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կարիքների համար գինեգործական սարքերի և ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Դավիթ Պետրոսյան» Ա/Ձ-ն:

«Դավիթ Պետրոսյան» Ա/Ձ-ն մասնակցության հայտի թիվ 4 հավելվածով՝ Ընկերությունը հայտարարել և հավաստել է, որ «ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/8» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Ինչպես նաև նույն հավելվածով «Դավիթ Պետրոսյան» Ա/Ձ-ն պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/8» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)' անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.04.2019թ.-ին նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Դավիթ Պետրոսյան» Ա/Ձ-ն 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.05.2019թ.-ին նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը մինչև 06.05.2019թ. ուսումնասիրել է մասնակիցների ներկայացրած որակավորման փաստաթղթերը և պարզել, որ «Դավիթ Պետրոսյան» Ա/Ձ-ի՝ 1-ին չափաբաժնի մասով ներկայացրած փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն:

Նույն արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը, հիմք ընդունելով հրավերի 7.20 կետը, նիստը կասեցրել է և մասնակցին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.05.2019թ.-ին նիստի թիվ 3 արձանագրության 1.2 կետով կայացված որոշման համաձայն՝ հանձնաժողովը, հիմք ընդունելով հրավերի 7.21 կետը, որոշել է մերժել «Դավիթ Պետրոսյան» Ա/Ձ-ի հայտը և տվյալները ներկայացնել լիազորված մարմին (հիմք ՀՀ Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետ):

05.05.2019թ.-ին Պատվիրատուի Ոսկեհատ ՈՒՓՏ գինու ուսումնագիտական կենտրոնի ղեկավար գլխավոր գինեգործ Ա. Գաբրիլեյանի կողմից Մասնակցին ուղղված գրությամբ հայտնել են, որ՝ *«Ձեր կողմից ներկայացված շոգեգեներատորի տեխնիկական բնութագիրը բազմաթիվ ցուցանիշներով չի համապատասխանում մեր կողմից հայտարարված ցուցանիշներին: Մասնավորապես, եռարանի ծավալը 7.3 լիտրի փոխարեն պետք է լինի 25 լ, ջրի պահամանը՝ 14 լիտրի փոխարեն 20 լիտր: Օպերացիոն ճնշման ցուցանիշը հստակ նշված չէ և բավականին բարձր է՝ 5.5-10 բար: Սարքի հզորությունը (23 կՎտ/ժ) և արտադրողականությունը (30 կգ/ժ) երկու անգամ բարձր են մեր կողմից ներկայացված ցուցանիշներից:*

Ավելացնենք նաև, որ համաձայն կատարված հարցումների, ձեր կողմից նշված ապրանքանիշը ՀՀ-ում չունի ներկայացուցիչ, ինչը հետագայում կարող է դժվարությունների առաջացնել սպասարկման և օժանդակ մասերի գնման հարցում: Մեկ այլ հարցման համաձայն, նշված ապրանքանիշը չի օգտագործվում գինեգործական արտադրություններում, հետևաբար վստահություն չի ներշնչում: Հարկ է նշել նաև, որ նշված ապրանքանիշի շուկայական արժեքը անհամեմատ ցածր է շուկայում առկա նմանատիպ այլ սարքերի և մրցութային կարգով ներկայացված արժեքի համեմատությամբ:»:

06.05.2019թ.-ին «ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/8» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին է ուղարկվել ծանուցում, համաձայն որի՝ *««ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/8» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում, հանձնաժողովի որոշմամբ մեկ աշխատանքային օրով կասեցվել է նիստը, քանի որ Ձեր ներկայացրած հայտում առկա է հետևյալ անհամապատասխանությունները: Մասնավորապես՝ 1-ին չափաբաժնով Ձեր ներկայացրած շոգեգեներատորը հետևյալ չափանիշներով չի համապատասխանում հրավերի պահանջներին. եռարանի ծավալը 7.3 լիտրի փոխարեն պետք է լինի 25 լ, ջրի պահամանաը՝ 14 լիտրի փոխարեն 20 լիտր: Օպերացիոն ճնշման ցուցանիշը հստակ նշված չէ և բավականին բարձր է՝ 5.5-10 բար: Սարքի հզորությունը (23 կՎտ/ժ) և արտադրողականությունը (30 կգ/ժ) երկու անգամ բարձր են մեր կողմից ներկայացված ցուցանիշներից:*

Հիմք ընդունելով ընթացակարգի հրավերի 7.20 կետի 2-րդ ենթակետը՝ առաջարկվում է մինչև կասեցման ժամկետի ավարտը պատշաճ կարգով շտկել առկա անհամապատասխանությունները և դրանք ուղարկել anau.gnumner@mail.ru էլ. փոստի հասցեին:

Սահմանված ժամկետում հայտը չշտկելու դեպքում հրավերի 7.21 կետի համաձայն հանձնաժողովի կողմից այն կգնահատվի անբավարար և կմերժվի:»

10.05.2019թ.-ին Պատվիրատուի Ոսկեհատ ՈՒՓՏ գինու ուսումնագիտական կենտրոնի ղեկավար գլխավոր գինեգործ Ա. Գաբրիլեյանի կողմից Մասնակցին ուղղված գրությամբ հայտնել են, որ՝ *«Ձեր կողմից ներկայացված շոգեգեներատորի շտկված տեխնիկական բնութագիրը բազմաթիվ ցուցանիշներով չի համապատասխանում մեր կողմից հայտարարված ցուցանիշներին: Մասնավորապես, եռարանի ծավալը 11 լիտրի փոխարեն պետք է լինի 7.3 լ, ջրի պահամանը 20 լիտրի փոխարեն 14 լիտր, զանգվածը՝ 45 կգ-ի փոխարեն 60 կգ: Օպերացիոն ճնշման ցուցանիշը հստակ նշված չէ և բավականին բարձր է՝ 5.5-10 բար: Սարքի հզորությունը (23 կՎտ/ժ) և գոլորշու արտադրողականությունը (30 կգ/ժ) մոտ երկու անգամ բարձր են մեր կողմից ներկայացված ցուցանիշներից:*

Ավելացնենք նաև, որ համաձայն կատարված հարցումների, ձեր կողմից նշված ապրանքանիշը «-ում չունի ներկայացուցիչ, ինչը հետագայում կարող է դժվարություններ առաջացնել սպասարկման և օժանդակ մասերի գնման հարցում: Հարկ է նշել նաև, որ նշված ապրանքանիշի շուկայական արժեքը անհամեմատ ցածր է շուկայում առկա նմանատիպ այլ սարքերի և մրցութային կարգով ներկայացված արժեքի համեմատությամբ:

Բացի վերոնշյալ հիմնավորումներից, պետք է նշել նաև որ սարքը պետք է նախատեսված լինի գինեգործական արտադրությունների համար (ինչի մասին վկայում է մրցույթի Ընդհանուր վերնագիրը), որն իրենից ենթադրում է, որ սարքը պետք է գործարանային վիճակում ունենա գինեգործական գործընթացների իրականացման համար նախատեսված օժանդակ մասեր (գինու տակառի՝ գոլորշով մշակման համար նախատեսված հարմարանք, մեմբրանային ֆիլտրերի մշակման և ախտահանման գործընթացի համար նախատեսված հարմարանք): Վերոնշյալ հատկանիշի բացակայության դեպքում սարքի օգտագործումը գինեգործական արտադրությունում կլինի անիմաստ:

Հարկ է նշել, որ նման պայմանների դեպքում անհնար է լինում ապագայում մրցույթ հայտարարել տվյալ շոգեգեներատորի համար նախատեսված գինեգործական հարմարանքների ձեռք բերման համար, քանի որ այդպիսիք կառուցվածքով նախատեսված չեն:»:

Հրավերի տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցի համաձայն՝

Չափաբաժնի համար	Գնման առարկայի	
	անվանումը*	**հատկանիշները (տեխնիկական բնութագիր)**
1.	Շոգեգեներատոր	Չոր և թաց գոլորշի արտադրող շոգեգեներատոր նախատեսված տակառների և այլ գինեգործական գործիքների լվացման համար: Եռարանն ու շրջանակը պատրաստված են ՉԺՊ AISI 304-ից: Եռարանի ծավալը՝ 7.3 լիտր, ջրի պահամանը՝ 14 լիտր, օպերացիոն ճնշումը՝ 6 բար, քաշը՝ 60 կգ, էլեկտրական լարումը՝ 3~400 Վոլտ / 50-60 հերց, հզորությունը՝ 10,95 կվտ, գոլորշու արտադրությունը՝ 17,5 կգ/ժամ, էլեկտրամատակարարման լարը՝ 8մ:

23.04.2019թ.-ին «Դավիթ Պետրոսյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով՝ Հավելված 6.1-ի համաձայն՝ տեխնիկական բնութագիրը սահմանված էր. *«Գոլորշի արտադրող շոգեգեներատոր նախատեսված տակառների և այլ գինեգործական գործիքների լվացման համար: Եռարանն ու շրջանակը պատրաստված են ՉԺՊ AISI 304-ից: Եռարանի ծավալը՝ 25 լիտր, ջրի պահամանը՝ 20 լիտր, օպերացիոն ճնշումը 5,5-ԿՕ թար, քաշը ՝ 60 կգ, էլեկտրական լարումը՝ 3-400 Վոլտ / 50-60 հերց, հզորությունը՝ 23 կվտ*ժ, գոլորշու արտադրությունը՝ 30 կգ/ժամ, էլեկտրամատակարարման լարը՝ 8մ: Շոգեգեներատորի խողովակ: Աշխատանքային վիճակի հասնելու ժամանակը՝ 6 րոպե: Երաշխիք 24 ամիս:»:*

07.05.2019թ.-ին «Դավիթ Պետրոսյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով՝

Հավելված 6.1-ի համաձայն՝ տեխնիկական բնութագիրը սահմանված էր. *«Գոլորշի արտադրող շոգեգեներատոր նախատեսված փակառների և այլ գինեգործական գործիքների լվացման համար եռարանն ու շրջանակը պատրաստ են ՉԺՊ AISI 304-ից: Եռարանի ծավալը՝ 11 լիտր, ջրի պահամանը արտաքին՝ 20 լիտր, օպերացիոն ճնշումը 5,5-/0 բար, քաշը 45 կգ, էլեկտրական լարումը 3-400 Վոլտ/50-60 հերց, հզորությունը 23 կվտ*ժ, գոլորշու արտադրությունը 30 կգ/ժամ, էլեկտրամատակարարման լարը՝ 8մ: Շոգեգեներատորի խողովակ՝ 10մ: Աշխատանքային վիճակի հասնելու ժամանակը՝ 4 րոպե: Երաշխիք 24 ամիս:»:*

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.05.2019թ. թիվ 26/26-1/8960-2019 գրությամբ «Դավիթ Պետրոսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով

ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը…:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին՝ ունենալով պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ, որոնց առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այն դեպքում, երբ հայտերի բացման նիստի ավարտից հետո էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցված առաջին տեղն զբաղեցրած մասնակցի ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացվել են ոչ ամբողջական կամ դրանց գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, ապա հանձնաժողովի քարտուղարը կրկին անգամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց

հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Նույն կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Վերը նշված դրույթների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին հավաստող՝ իր կողմից հաստատված հայտարարություն (այսուհետ՝ Հայտարարություն): Եվ եթե Հայտարարությունը որակվի որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնի հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ տվյալ մասնակցի հայտը պետք է մերժվի, մասնակիցն էլ ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ ներկայացնելով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին հավաստող՝ իր կողմից հաստատված իրականությանը չհամապատասխանող հայտարարություն, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նշվածով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների մասին իրականությանը չհամապատասխանող հայտարարություն ներկայացրած անձինք գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն, ու այդ դեպքում մասնակիցը պետք է ընդգրկվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Դավիթ Պետրոսյան» Ա/Ձ-ի կողմից 23.04.2019թ.-ին և ապա 07.05.2019թ.-ին շտկված տարբերակով ներկայացրած իրարից տարբերվող ապրանքի տեխնիկական բնութագրերը չեն հանապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Դավիթ Պետրոսյան» Ա/Ձ-ն, Պատվիրատուի կողմից սահմանված շտկման ժամանակահատվածում, չներկայացնելով իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ, նյութեր, չի բավարարել Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին, դրանով իսկ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, իսկ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ուստի, տվյալ պարագայում, գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը մերժելու մասին որոշումն իրավաչափ է և բխում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.05.2019թ. թիվ 26/26-1/8960-2019 գրությամբ «Դավիթ Պետրոսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Դավիթ Պետրոսյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**